



*Համարը N 301
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 1997.08.22/19
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 02.09.1997*

*Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 24.07.1997
Ստորագրման ամսաթիվը 24.07.1997
Վավերացման ամսաթիվը 24.07.1997
Ուժը կորցնելու ամսաթիվը*

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԻՍՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Լ. Տեր-Պետրոսյան
24 հուլիսի 1997 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 1997 թվականի N 301
քաղ. Երևան

**«ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԱՐՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2, 4, 7, 12 և 14 հոդվածներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնի իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝

ա) երկամյա ժամկետում հաստատել ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) կանխարգելման հանրապետական կենտրոնի կանոնադրությունը.

բ) Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ մինչև 1998 թվականի մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ-ով) վարակված անձանց և ՁԻԱՀ-ով հիվանդների որակյալ մասնագիտացված բժշկական օգնության ու սպասարկման, ինչպես նաև այդ ուղղությամբ կատարվող գիտական և գործնական հետազոտությունների պետական նպատակային ծրագրերը.

գ) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնել երեխաների ու երիտասարդների բարոյական և սեռական դաստիարակությանն ուղղված համապատասխան միջոցառումներ, իսկ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնել առաջարկություններ.

դ) եռամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել այն աշխատանքների ցանկը, որոնց կատարումը չի թույլատրվում ՄԻԱՎ-ով վարակված անձանց.

ե) եռամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնել առաջարկություն «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածով սահմանված արտոնությունները տալու պայմանների և կարգի վերաբերյալ:

(2-րդ կետը փոփ. 09.03.98 N 160)

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 459 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երրորդ պարբերությամբ:

«Երեք ամսից ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ստանալու համար դիմած օտարերկրյա քաղաքացիները ներկայացնում են ՄԻԱՎ-ի հետազոտման հավաստագիր (սերտիֆիկատ)»:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ռ. Քոչարյան